
ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐ

ՊԵՐՃ ԹԵՐԶՅԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ Ս. Թ.

Տարիներ առաջ մի քանի ընկերներով հյուրընկալվել էինք մեր օրերի մեծերից մեկին՝ Համո Սահյանին: Վարպետը մեզ գինի հյուրասիրեց, անում էր ամեն ինչ, որ մենք ազատ զգայինք, ինչը, անկեղծ ասած, այնքան էլ չէր հաջողվում: Խանգարում էր մեր խորին հարգանքն ու ակնածանքը կենդանի դասականի նկատմամբ: Շատ հարցերի մասին գրուցեցինք, սակայն տպավորվել է վարպետի խոսքը բանաստեղծություններ գրելու, գրողների ու գրելուն նպաստողների մասին:

– Մինչև 18-20 տարեկան բոլորն են գրում, – ժպտախառն ու իմաստահարուստ հայացքով մեզ գուրգուրելով ասաց Վարպետը, ապա շարունակեց, – 20-25 տարեկանում գրում են թունդ սիրահարվածները, իսկ դրանից հետո՝ գծերը: Իսկ, այ դու, մատնացույց անելով մեր ընկերներից վաղամեռիկ Ռոբերտ Դանիելյանին, ասաց նա, քիմիական այն տարրն էս, որ ինքդ չես այրվում, սակայն ամեն ինչով նպաստում էս այրմանը, իսկ հաճախ էլ՝ բոցավառմանը... Երբ առիթ ներկայացավ եզրափակելու ազգային, հասարակական ու մշակութային գործիչ Պերճ Թերզյանի մասին գրելու, չգիտեմ ինչու, ակամա հիշեցի Վարպետին ու նրա այրվելուն նպաստելու մասին գրույցը: Հիրավի, Պ. Թերզյանը մարդկային այն տեսակն է, որ ամեն ինչով նպաստում, օգնում է հայ մնալու, հայի դեմքը չկորցնելու, հայոց ոգին ու ձգտումները անաղարտ պահպանելու ու սերունդներին փոխանցելու ազդանվեր գործին:

Հանդիպեցինք միայն վերջերս, սակայն այնքան շատ էի լսել Թերզյանի մասին ու կարդացել նրա հրապարակումները, որ ինձ թվաց վաղեմի բարեկամներ ենք: Պատահական չէր երևի, որ մեր այդ հանդիպումների ու շփումների շնորհիվ յուրատեսակ պահանջ զգացի և ցանկություն՝ գրելու տարիների վաստակած ծանրությունից ու կենսափորձի առատությունից սակավախոս դարձած, սակայն բացառիկ ազնիվ ու իրատես բարեկամիս մասին: Բհարկե, կարծում եմ դեռ կլինեն կենսագիրներ, որոնք ավելի մանրամասն ու ամբողջական կներկայացնեն Պ. Թերզյանի կյանքն ու կատարած ազգանպաստ գործերը: Իմ խնդիրն ավելի համեստ է՝ հնարավորինս հակիրճ ներկայացնել նրա արգասաբեր մտածողության և բեղուն գրչի արդյունք ստեղծագործությունները: Գիտեմ, բարեկամս կարդալով մի փոքր շիկնելու է, քանի որ էությանմբ չափազանց պարզ ու համեստ է, սակայն որոշումս արդեն կայացած է ու անփոփոխ, քանի որ

բոլորը, իսկ ազգանվեր գործիչն ու գրչի իսկական մշակը՝ հատկապես, արժանի են գնահատանքի խոսքի ու մեծարման:

Պ. Թերզյանի հոգու միջուկը գիրն ու գիրքն են, հայ ազգն ու նրա անհատակ մշակույթը: Կատարած գործերին ծանոթանալով՝ հասկանում ես, որ նա սովորական մի անձ չէ, այլ ուժեղ ու ստեղծագործող անհատականություն: Իսկ նման անհատները մեծարման համար չէ, որ գործում են, քանի որ նրանք իրենց գործով, վաստակով, թողած նշանակալի ժառանգությամբ և կերտած կենսագրությունով արդեն բարձունքում են: Թերզյանը գնահատելի երևույթ է: Նա զգալի վաստակ ունի և Մփյուռքի մեջ իր հրատարակած գրքերով ու հոդվածներով, ստեղծել է մամուլի յուրահատուկ միջավայր ու մթնոլորտ: Իր ունեցած տպավորիչ իրագործումները հարգանք են պարտադրում յուրաքանչյուր հայորդու: Միավասիկ նաև այս է պատճառը, որ այսօր գրիչ եմ վերցրել գնահատելու ու հարգանքիս տուրքը մատուցելու իրեն՝ հոգաձու վերաբերմունքով, յուրահատուկ հումորով և համբերատար նկարագրով ազնիվ հայորդուն, արժևորելու նրա մատուցած անձնագոհ ծառայություններն ու հատկապես ստեղծագործությունները: Եթե փորձենք Թերզյանի կյանքի էջերը թղթատել, կգտնենք այնտեղ իր էությունը, նվիրումի, հավատքի, զոհողության և անշահախնդիր ծառայելու ոգին: Ազգային կյանքի հավատափոր նվիրյալը ծառայել է ազգապահպանության վեհ գործին, և կցանկանայինք այսուհետև ևս վերանորոգ ուխտով շարունակի իր նվիրական այդ երթը: Մեր զրույցների ընթացքում հաճախ է շեշտում, որ իրեն գրող կամ հետազոտող չի համարում: Մակայն հաճախ կարելի է տեսնել, թե որքան մտահոգ է ու անհանգիստ հատկապես Մփյուռքի այսօրվա համար. «Եթե այսօր չապահովենք մեր նոր սերունդին ազգային դաստիարակությունը, ապա՝ 20-30 տարի պիտի չունենանք ազգային ծառայութեան եւ Հայրենիքին օգտակար ըլլալու նուիրուած սերունդ մը. այսօրուրնէ պատրաստելու ենք մեր ապագայ առաջնորդները, - մի հանդիպման ժամանակ մտահոգ ասաց նա:

Լինում են պահեր ու խնդիրներ, որոնց կողքով անտարբեր չի կարողացել մնալ և դիմել է գրչի ու թղթի ծառայությանը: Մեր նախորդ հանդիպումներից մեկի ժամանակ խնդրեցի, և Եգիպտոս հասնելու իմ առաջին իսկ օրն ուղարկեց իր լույս տեսած բոլոր աշխատությունները: Դրանք հաստատվոր չեն, ամպագոռոռ թեմաներ չեն ընդգրկում, սակայն ասելիք ունեն. պարզ, հասկանալի, ջինջ ու ծորուն արևմտահայերենով ներկայացնում են խնդիրները: Ամենակարևոր արժանիքը, թերևս, դրանց հրատապությունն ու անկեղծությունն են, խնդրո առարկա թեմայի հետ առնչվող բոլոր եզրերի իմացությունն ու ամբողջական ընկալումը:

«Բնչպե՞ս տօնուեցաւ հայ պարբերական մամուլի 200-ամեակը Գահիրէի մէջ»¹ գրքույկում նա ներկայացրել է նվիրյալ ու պատրաստակամ եգիպտահայերի (1960-ականներից նրանց շարքերի առջևից հպարտորեն միշտ «քայլել է» նաև Թերգյանը) ներդրած հսկայական ջանքերը Կահիրէում հայ մամուլի հորելյանին նվիրված ցուցահանդես ու հարակից միջոցառումներ կազմակերպելու գործում: Մեզ՝ հայաստանաբնակներին համար դժվար ժամանակներ էին: Նորանկախ հանրապետությունը պատերազմի, մուծ ու ցուրտ տարիների բեռի տակ էր կքած: Նույնիսկ միջոցներ չգտնվեցին «Հայ պարբերական մամուլի պատմություն հիմնարար կոլեկտիվ աշխատությունը» հրատարակելու համար: Իսկ Եգիպտոսում մի խումբ նվիրյալ հայերի ջանքերով կազմակերպվեցին տոնական միջոցառումներ, ցուցահանդես, որի զարդապսակը, անկասկած, հայ մամուլի «պատէ պատ երկարող» քարտեզն էր, որի վրա նշված էին այն բոլոր քաղաքները, «ուր հայերէն թերթ լոյս տեսած է, հայ մամուլի գոյութեան 200 տարուան ընթացքին»²: Դրանից տեղեկանում ենք, որ աշխարհի 264 քաղաքներում լոյս են տեսել հայեցի թերթեր: Այդ հսկայական քարտեզը դիտողը ականայ այն տպավորությունը կ'ունենար, թէ հայերը ամբողջ աշխարհը գրաւած են...»³: Հետաքրքիր մոտեցում է հանդես բերում հեղինակը՝ խորհրդանշանակ ձևով, քարտեզի միջնորդավորված պատկերով ներկայացնելով հայի միախառնված մեծ ցավն ու անթաքույց հպարտությունը, շաղախված միմյանց ու հոգու խորքում անթելված:

Պարոն Թերգյան, այսքանից հետո հաճախ նշում էք, որ գրող չէք: Գուցէ գրող չէ, բայց գրողի հոգի՝ հաստատ ունեք: Այդ հոգին, ազնիվ ու մաքուր Ձեր նկարագիրը կարմիր թելի նման անցնում է նաև «Անտեղի պատիւի մը շոայլումին առիթով»⁴ գրքույկում, որի թեման թեև այնքան էլ գրավիչ չէ, սակայն անկեղծորեն վերհանում է Ձեր ազնվությունն ու նախանձելի անկեղծությունը:

Իսկ մեկ այլ՝ «Տեղեկագիր...»⁵ գրքույկում Պ. Թերգյանը ներկայանում է նոր հոգսերի բեռով ու նոր առաքելությամբ: Այստեղ տեսնում ենք արդեն Միլիուքում գործող կրթահամակարգի, տարաբնույթ վարժարանների ու մատաղ սերնդի դաստիարակության խնդիրներով մտահոգ հային: Առաջին հայացքից հեղինակն ընդամենը կանոնագրի մասին է խոսում, սակայն իրականում ներկայացնում է այն ջանադիր գործունեությունը, որ ծավալել են հեղինակն ու մի խումբ նվիրյալներ՝ հայկական կրթօջախն անաղարտ

¹ Թերգյան Պ., Բնչպե՞ս տօնուեցաւ հայ պարբերական մամուլի 200-ամեակը Գահիրէի մէջ, Գահիրէ, 2009:

² Նույն տեղում, էջ 10:

³ Նույն տեղում, էջ 11:

⁴ Թերգյան Պ., Անտեղի պատիւի մը շոայլումին առիթով, Գահիրէ, 2010:

⁵ Թերգյան Պ., Տեղեկագիր Գալուստեան եւ Նուպարեան Ազգային Վարժարաններու՝ 1988 տարւոյ թիւ 260 նախարարական որոշմնագրին համաձայն պատրաստուած եւ վաւերացուած կանոնագրերու մասին, Գահիրէ, 2011, Գահիրէ, 2010:

պահելու և մատաղ սերնդին հայեցի դաստիարակելու, հայերենով կրթելու գործում:

Հանդարտաբարտ վարքագծի տեր, խաղաղ ու անառարկելի ոճով, «նիւթի մէջ անգամ ներքին անհանգստութիւնը կամ անհամաձայնութիւնը» անկողմնակալ, համակողմանի, նկարագրական մանրամասներով քողարկող (որն ավելի վստահություն է հաղորդում նրա խոսքին)⁶ Պ. Թերզյանի նախորդ տարիներին կատարած ազգանվեր գործերի, արձանագրող գրչի ու տարեգրողի, ասելիք ու անելիք ունեցող անհատի ստեղծագործությունների յուրատեսակ ամփոփում ու ամբողջացում է «Յետադարձ անդրադարձ» ժողովածուն⁷: Այստեղ անհատն է, Աշխարհի քաղաքացին, հայի ու սփյուռքահայի տեսակը, տարիների իր կենսափորձով, աշխարհընկալմամբ ու մինչև ուղնուծուծը ազնվաբարտ կեցվածքով՝ գրիչ-թուղթ մոլորակի անխոնջ կատարողը:

Իր կյանքի «անգուգական ընկերուհուն», հիրավի, տարիների բեռը հպարտորեն մերժող, միշտ գեղեցիկ, շարունակ նորովի ու ավելի հմայիչ, աշխարհի ամենահամով սուրճը հյուրասիրող տիկին Մեղային նվիրված այս ժողովածուն լայն ընդգրկում ունի: XX դարի վերջին քառորդին ամբողջ Սփյուռքում, մայր Հայրենիքում և եգիպտահայ գաղութում համազգային մտահոգության առարկա եղած իրադարձությունների մասին տարիների ընթացքում գրված այս անդրադարձները խմբավորված են չորս բաժիններում՝

ա. «Յօդուածներ», որոնք «Արեւ» օրաթերթում «Լուսանցքի վրայ» խորագրի ներքո լույս տեսած նյութերի ծաղկաքաղն է,

բ. «Ելոյթներ» եգիպտահայ տարբեր կառույցներում «արտասանուած բազմատասնեակ խոսքերէ փոքրաթիւ նմոյշներ են, որոնք կը ցոլացնեն առիթին պատգամ»⁸,

գ. «Հարցազրոյցներ»՝ հեղինակի տված և ուրիշներից վերցրած հարցազրույցներ են,

դ. «Ուսումնասիրութիւն», որը «կը վերաբերի եգիպտահայ ազգային վարժարաններու մերօրեայ վիճակին»⁹:

Հոդվածների հիմնական նյութը կյանքն է՝ իր խնդիրներով, հոգսերով, աշխույժ առօրյայով ու փոքրիկ հաղթանակներով: Եվ այդ ամբողջ իրադարձությունների կիզակետում մարդն է, հայն ու եգիպտահայը՝ իր մտորումներով, աշխարհընկալմամբ և անորոշ վաղվա օրվա նկատմամբ մի քիչ էլ անհանգստությամբ: Այստեղ իրար կողքի են մեկտեղվել մամուլի մշակն

⁶ Թերզյան Պ., Յետադարձ անդրադարձ, Գրախօսականներ, Գահիրե, 2011.

⁷ Թերզյան Պ., Յետադարձ անդրադարձ, յօդուածներու, ելոյթներու, հարցազրոյցներու եւ ուսումնասիրութեան ժողովածոյ, Գահիրե, 2010:

⁸ Նույն տեղում, էջ 19:

⁹ Նույն տեղում, էջ 20:

ու հայի ապագայով մտահոգ կրոնավորը, հայկական ռադիոժամի աշխատակիցն ու մարզաժաշկությանն ասպարեզի ներկայացուցիչը, նշանավոր և ունևոր հայն ու կրթական գործի երախտավոր մշակը: Նրանք բոլորն էլ լարված են, մտահոգ, վաղվա օրվա նկատմամբ անվստահ: Հոգս ու ցավ ունեն նրանք, առաջին հայացքից անտեսանելի կարոտ՝ Հայրենիքի ու հայի տեսակի հանդեպ, Եղեռնից ժառանգած հոգու խորքում անթեղված անթաքույց ցավ ու մորմոք...: Այս ամենով հանդերձ Թերգյանի հրապարակումներում այս կամ այն հարցի վերաբերյալ մտորումներում ու եզրահանգումներում նկատելի է լավատեսությունը, ինչը, անկասկած, մեծ հոգու, հզոր անհատի առհավատյան է:

Այդ լավատեսությունն ու անսասան հավատն ապագայի նկատմամբ դրսևորվում է հատկապես բոլոր այն դեպքերում, երբ խոսվում է հայոց պետականության մասին: Թերգյանը, խոր մորմոքով արձանագրելով հայ մարդու մեծագույն ցավն ու ողբերգությունը, կատարում է ուժեղ ու «պինդ» անհատին վայել եզրահանգումներ՝ անհրաժեշտ ու պարտադիր է համարում՝

ա. անցյալից դասեր քաղել,

բ. վերլուծել, տեղի ունեցած և ընթացող իրադարձությունները խորքային մակարդակով ճանաչել և հասկանալ,

գ. ճշգրտել առաջիկայում համայն հայության անելիքները, մասնավորապես աշխարհի կողմից ցեղասպանության ճանաչման, պահանջատիրության և այլ հարցերում,

դ. անչափ կարևոր է, որ այդ նվիրական առաքելության իրականացմանը որպես գրավական տեսել է հայոց պետականությունը՝ շեշտելով, որ բնավ էլ կարևոր չպիտի լինի, թե ով է ներկայացնում Հայաստանը:

Իրեն գիտակ ուսումնասիրող չհամարող Թերգյանն այս դեպքում հանդես է բերում նյութի և իրավիճակի խոր իմացություն և անչափ կարևոր ու անհրաժեշտ համարում թուքական կողմի հակահայ քարոզչությանն ու մերժողականությանն արժանի պատասխան տալը, ընդգծելով այն խիստ վտանգավոր միտումը, որ թուրքերին երբեմն հաջողվում է հայերին ներկայացնել իբրև իսլամի թշնամիներ և թուրքերին կոտորողներ¹⁰:

Թուրքական քարոզչությանն արժանի պատասխանելու հանգամանքն էլ ստիպեց, որ 1998-ից սկսած՝ Թերգյանը «Արև»-ի արաբերեն հավելվածում արաբալեզու ընթերցողին հետևողականորեն ներկայացնի 1915 թ. կատարված իրադարձությունների իրական պատկերը: Այս հոդվածաշարը, իմ կարծիքով, Թերգյանի ստեղծագործական նվաճումը կարելի է համարել, կատարած աշխատանքների յուրահատուկ խտացում: Այս տեսակ հրապարակումները մեզ՝ աշխարհում սփռված հայերիս համար, երբեմն այնքան

¹⁰ Նույն տեղում, Թրքական նենգություն, էջ 50:

շատ գործ են կատարում և այնքան ուսանելի կողմեր ունեն, որ դրանց նշանակությունը գերազնահատել հնարավոր չէ¹¹:

Ազգի հոգսերով մտահոգ գործչին բնականաբար պիտի անհանգստացնեին նաև գաղութահայ դպրոցն ու, ամենամեծ, կրթական խնդիրները, որոնք դարձել են հրապարակախոսի հետաքրքրության առարկան: Թերզյան-հեղինակ-հային անհանգստացնում ու վախեցնում է այն փաստը, որ հայ աշակերտության քանակը շարունակաբար նվազում է, որի հետևանքով էլ փոստագրված է հայկական վարժարանների ապագան: Հեղինակը ցավով արձանագրում է, որ աշակերտների թվի անկմանը գուցենթաց՝ հազվադեպ են հանդիպում նաև կիրթ ու մաքուր գրական հայերենով խոսող անձինք. «Շատերու կողմէ հայերէն քանի մը նախադասութիւն շարայարողը կը նկատուի մտաւորական,- ցավով ու ամոսաւանքով գրում է Թերզյանը, - այնքան որ նօսը դարձած են մաքուր հայերէնով արտահայտուողներու շարքերը»¹²: Հետաքրքիր է, որ հեղինակը իրավացիորեն դա չի համարում գաղութի թվի նվազման արդյունք, այլ, նրա կարծիքով, դա ավելի շատ գաղութի «ապամտաւորականացման» հետևանք է: Ունենալով նույն մտահոգությունը՝ ավելին ասել, պարոն Թերզյան, դա համահայկական, համաշխարհային գործընթացների արդյունք է. գիտատեխնիկական ամենժամյա հեղաշրջումները, համացանցն ու նորանոր տեխնոլոգիաները ժամանակ ու հնարավորություն չեն տալիս դասական ըմբռնումներով «մտավորականանալու», որը, իհարկե, երբեք էլ չի արդարացնում բոլի ու կիսագրագետ լինելու տարածված հանգամանքը: Գոնե մեզ՝ հայերիս նման փոքրաթիվ ու աշխարհով մեկ սփռված ժողովրդի համար օդի նման անհրաժեշտ է գրագետ, խելացի ու կիրթ լինելը, այլապես մենք այլ զենք չունենք դիմագրավելու այսօրյա բազմաթիվ մարտահրավերներին:

Պատմաբանիս տեսանկյունից դիտարկելով ու մանրագնին քննարկելով ժողովածուում տեղ գտած բոլոր հրապարակումները՝ հակված եմ կարծելու, որ ոչ բոլոր ընթերցողները միանշանակ կհամաձայնեն ու կընդունեն դրանցում առկա տեսակետներն ու եզրահանգումները: Մասնավորապես՝ ավանդական կուսակցությունների գործունեության, ազգային խորհրդանիշների, եկեղեցական տարաբնույթ վեճերի, Հայաստանի երեք հանրապետությունների պատմության, ազգային խնդիրներում որոշ գործիչների պահվածքի և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Հստակ է, սակայն, որ հեղինակն ու նրա տեսակետներն իրենց ծնող ու սնող, հարազատ միջավայրի ու ապրած ժամանակի արդյունք են: Նա անկեղծ է ու ազնվորեն ներկայացնում է այն տեսակետները, որոնց հավատում է, որոնք ճիշտ է

¹¹ Քանի որ սույն աշխատանքում Պ. Թերզյանի հրատարակած աշխատությունները ներկայացնելու համար ընտրված է դրանց ըստ հրատարակության տարեթվերի սկզբունքը, հոդվածաշարի մասին հանգամանորեն կխոսենք մի փոքր ավելի ուշ:

¹² Թերզյան Պ., Յետադարձ անդրադարձ, յօդուածներու, էլոյթներու, հարցազրոյցներու եւ ուսումնասիրութեան ժողովածոյ, Գահիրէ, 2010, Որոշում առնող տարրը, էջ 46:

համարում: Վստահ եմ նաև, որ այդ մոտեցումները միայն կօգնեն ճիշտ ու իրատեսական եզրահանգումներ և կառուցողական քայլեր կատարելու համար և ներհամայնքային դժգոհությունների ու պառակտումների առիթ չեն դառնա:

Պ. Թերգյանի, որ «Հայուն ցաւերովը ճենճերող հոգի մը է, որ ելք մը կը փնտռէ որպէս բալասան հայուն կոտտացող վէրքերուն»¹³, հաջորդ աշխատությունը երկրագնդի վրա Եղեռնի արյունածոր քարտեզի ու այդ հոգեբանական քարտեզագրության «ցուցումն» ու դրա «թանձրացեալ հանգանակը»¹⁴ հանդիսացող գրքույկն¹⁵ իսկական անակնկալ էր, հաճելի նորույթ: Միանգամայն համամիտ եմ հեղինակին, ինքս էլ չեմ հիշում, որ երբևէ հանդիպած լինեմ մեկ հեղինակի մի գրքի մասին գրախոսականների առանձին ժողովածուի: «Յետադարձ անդրադարձ»-ին յուրակերպ այս արձագանք-անդրադարձի առաջաբանում Թերգյան-հեղինակը հերթական անգամ նշելով, որ իրեն «երբեք գրող մը չէ նկատած», հաճելիորեն զարմացել է, որ «յիմանալով իր գրող ըլլալը» նույնիսկ մրցանակակիր գրողներ իրեն գրչեղբայր են անվանել: Խոր թաքցրած մանկան անադարտ հրճվանք ապրելով՝ շտապում է մտավախություն արտահայտել, թե չլինի հանկարծ այս տեսակ գրքույկի հրապարակումը «մեկնաբանուիլ որպէս մեծամտութիւն եւ անհամեստութիւն, երկու հասկանիշներ, որոնցմէ խորապէս ինքը կը խորշի»¹⁶: Չափազանց համեստ հեղինակը նույնիսկ խնդրում է ընթերցողին, որ գրախոսականներում եղած «երբեմն չափազանցութեան երթալու աստիճան» դրվատանքի խոսքերի վրա չկենտրոնանա, այլ գրքում առաջ քաշված հայկական իրականության մեջ առկա, հայ հավաքական «մտածողութիւնը փոթորկող քրոնիկ հարցերուն եւ տագնապներուն», այն հրատապ խնդիրների վրա, որոնց լուծումներն անհրաժեշտ են ու հրամայաբար անհետաձգելի:

Գրքույկում մեկտեղված է վեց գրախոսական, որոնց հեղինակներից յուրաքանչյուրը «Յետադարձ անդրադարձին» կատարել է իր անդրադարձներն ու մեկնությունները: Խնդիր չունենալով գրախոսականները գրախոսելու՝ նշեմ միայն, որ չեմ ցանկանում դրանցից առանձնացնել որևէ մեկը, պարզապէս նկատեմ, որ ընթերցելիս նկատեցի, ավելին, համոզվեցի՝ դրանք անկեղծ, սրտացավ և հեղինակին բացառապէս օգտակար լինելու մղումներով են լույս աշխարհ եկել: Խոսքս լիովին վերաբերում է նաև մի քանի դիտողությունների, որոնք առկա են գրախոսականներում:

¹³ ԹԵՐԳԵԱՆ Պ., Յետադարձ անդրադարձ, Գրախոսականներ, էջ 53:

¹⁴ Նույն տեղում, էջ 55:

¹⁵ Նույն տեղում, էջ 8:

¹⁶ Նույն տեղում:

Ինձ հաճելի ու օգտակար թվաց ու նախ և առաջ գրավեց այն սրտացավ վերաբերմունքն ու անհանգստությունը, այն մտահոգությունների շղթան, որ կար Թերզյանի «Անդրադարձում» և շարունակվում է գրախոսականներում: Առանձնապես կարևորում եմ, որ հեղինակները, որ ծնվել ու մեծացել են Սփյուռքում և քաջատեղյակ են տեղի խնդիրների բոլոր ծայրերին, շարունակելով ու ձայնակցելով հեղինակին՝ անթաքույց և անպաճույճ խոսքերով միաձայնում են. «Մեր ցաւը այն է, որ մեր մէջ ազգային զգացողութիւնը այնքան մը բթացած է, որ հարկ եղած լրջութեամբ չենք մտահոգուած հայ վարժարանին գոյութեան իմաստը արդարացնող ՀԱՅ ՄԱՐԴ պատրաստելու էական առաջադիմութեամբ», «Մեր լեզուին կարեւորութեան զգացողութիւնը չափազանց տկարացած է», որ ցավալի է, երբ շատերը առաջնորդվում են «ԵՐԵՒՆՅԵՐԻ հայ քլանք եւ ոչ՝ ԷՈՒԹԵԱՄԲ» կարգախոսներով, որ մեր առջև ծառացած երկու հիմնահարցերը Հայրենիքի ու հայրենամերձ «գաղութներու պարպումն ու լեզուի նահանջին վտանգն» է¹⁷ և այլն:

Եզիպտահայ գաղութի մերօրյա նահապետներից մեկի՝ Պ. Թերզյանի գրչին է պատկանում մեկ այլ արժեքավոր աշխատություն¹⁸ ևս: Աշխատություն, որն ինքնին նորություն է, քանի որ այն Հայաստանի Հանրապետության «դիվանագիտական ներկայացուցչության ստեղծման պատմությունը լուսաբանող անդրանիկ փորձն է»¹⁹: Թերզյանին հատուկ բժախնդրությունն ու անաչառությունը փաստերի հավաստիության, անկողմնակալության և իրատեսության տեսանկյունից անխոցելի են դարձրել նրա այս աշխատանքը ևս: «ՀՀ Եզիպտոսի դեսպանատան ծննդոցը» աշխատանքը վկայությունն ու կենդանի վավերագիրն է այն իրողության, թե ինչպես է հնարավոր անսասան համոզմունքի և անդադրում ջանքերի շնորհիվ իրականություն դարձնել աներևա-կայելին: Ուսանելի այս պատումը յուրակերպ հուշարձան է մոտ անցյալի այն կարևորագույն տեղաշարժերի, որի ընթացքում Հայրենիքն ու Սփյուռքը, հաղթահարելով տասնամյակներ գոյատևած երկաթյա վարագույրի անթափանց պատնեշը, «միմեանց ընդառաջ առաջին գողտրիկ քայլերն էին կատարում»²⁰: Քայլեր, որոնց որպես իրեղեն ապացույց ու Հայրենիք-Սփյուռք միասնականության առաջին խորհրդանիշ-կոթողներից մեկը Եզիպտոսում ՀՀ դեսպանատան «Չագրը» առանձնատունն էր, որի արժեքը սոսկ միայն որպես դեսպանատուն չի կարելի դիտել, այլ ավելի մեծ, ընդգրկուն ու վեհ մի երևույթ, անցյալի մաքառումների ու մեծ գոհողությունների գնով կոած հաղթանակների առհավատյա, պատգամ գալիք սերունդներին, լուսավոր փա-

¹⁷ Նույն տեղում, էջ 15:

¹⁸ ՀՀ Եզիպտոսի դեսպանատան ծննդոցը, ակնարկ քսանամեայ հեռաւորութենէ, Գահիրէ, 2012:

¹⁹ Նույն տեղում, էջ 8:

²⁰ Նույն տեղում, էջ 9:

րոտի գաղափար համայն հայությանը: Դեսպանատան հիմնումն ու նրա պատմությունը նաև ներկայացնում են այն զարգացումն ու հաղթական գործընթացը, որի ընթացքում Սփյուռքի գիտակցության մեջ վերջնականորեն արմատավորվում էր Հայրենիքը՝ որպես ողջ հայության անկախ և ինքնիշխան պետություն, այլ ոչ թե «ճամբուն վրա մեծ և անհասանելի» երազ:

Նախանձելի բժախնդրությամբ, ջինջ ու մաքուր հայերենով շարադրված այս աշխատանքն առանձնանում է փաստառատությամբ և կուռ, տրամաբանական ու պատճառահետևանքային կապերի ճշմարտացի բացահայտումներով: Ճիշտ է, հեղինակը երբեմն շատ է մանրամասնում, անհարկի վկայակոչումներ ու պարզաբանումներ է ներկայացնում, սակայն ամբողջության մեջ աշխատությունը հաջողված է, կայացած և ուսանելի շատ կողմեր է պարունակում:

Առերևույթ Պ. Թերգյանն ընդամենը Եզիպտոսում ՀՀ դեսպանատան հիմնադրման ու դրա հետ կապված դժվարությունների հաղթահարման պատմությունն է շարադրել: Սակայն նույնիսկ մի փոքր ուշադիր ընթերցելու դեպքում ակնհայտ է դառնում, որ աշխատության ծիրում 1990-ական թթ. ու դրանց առնչվող մեծաքանակ խնդիրների հետևանքների վրա նորանկախ Հայաստանի Հանրապետության, նրա արտաքին քաղաքականության, Հայրենիքի նկատմամբ Սփյուռքի նոր ու նորովի վերաբերմունքի, հայ մարդու անթաքույց հպարտության ու էլի շատ խորքային հարցերի քննություն է: Աչքի է զարնում մի կարևոր հանգամանք. հեղինակը գովեստով է խոսում ու շտալ գնահատանքի խոսքեր չի խնայում ազգանպաստ գործերի ու գործիչների դեպքում, ինչպես օրինակ՝ Է. Նալբանդյանի, սակայն, դրան հակառակ էլ խուսափում է որևէ անուն հիշատակելուց, եթե բացասական որակումներ պիտի արտաբերի: Ի՞նչ է սա: Իհարկե, մեծահոգություն, վեհանձնություն: Հատկանիշներ, որոնք սովորաբար միշտ հատուկ են եղել թերևս միայն ազնվական-մտավորական տեսակին:

Պ. Թերգյանի մյուս ուշագրավ «Գահիրէի ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չազըր հիմնադրամի հրատարակչական գործունեությունը» աշխատությունը²¹ գալիս է լրացնելու հեղինակի նախորդ գործերը այն իմաստով, որ սա ևս յուրակերպ հաշվետվություն է, հարգանքի ու երախտագիտության խոսք հիմնադրամը նախաձեռնողների ու նրան սատարողների հայրենանվեր քայլերի մասին: Հայ գրքի տպագրության 500-ամյակի առիթով գրված այս գրքույկում Պ. Թերգյանը բարեխիղճ ու իսկական մտավորականին վայել բառընտրությամբ ներկայացնում է այն հսկայածավալ գործունեությունը, որ իրականացվում է «Սաթենիկ Չազըր» հիմնադրամի միջոցներով: Տպագիր մամուլ, մամուլի թվանշային հավաքածուներ, երաժշտական բնույթի գրականության

²¹ ԹԵՐԳԵԱՆ Պ., Գահիրէի ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չազըր հիմնադրամի հրատարակչական գործունեությունը, Հայ գրքի տպագրութեան 500-ամեակին Առթիւ, Գահիրէ, 2012:

հրատարակություն, նկարների տպագրում, պատմագիտական ուսումնասիրությունների լույսընծայում և այլ բնույթի հրատարակչական իր գործունեությամբ, որոնց մասին բաժին առ բաժին խոսում է հեղինակը, հիմնադրամը մեծ ներդրում է կատարում հայերենի, հայեցիի տարածման ու բյուրեղացման և ազգապահպանության գործում: Այս անգամ ևս աչք է շոյում Թերզյան-հեղինակի բացառիկ ճշտախոսությունն ու մանրակրկիտ, նույնիսկ աղյուսակների տեսքով ներկայացրած այն բոլոր գրքերը, որոնք լույս են ընծայվել հիմնադրամի միջոցներով:

Հեղինակը դրվատանքի կամ գովաբանական որևէ խոսք չի ասում, պարզապես ներկայացնում է կատարված աշխատանքները, դրանք հանձնում սերունդների դատին, իսկ գնահատանքի բաժինը թողնում ընթերցողին ու ամենակարող ժամանակին:

Ուսումնասիրություններին ընթացքում հաճախ նախանձում եմ զարգացած երկրների գործընկերներին, քանի որ նրանք ազատ օգտվում են մերօրյա տեխնոլոգիական նվաճումների ընձեռած հնարավորություններից, մասնավորապես թվայնացված մամուլի ու գրականության առկայությունը մեծ տեսադաշտ է բացում նրանց առջև: Մեզանում էլ են սկսել այդ գործը, սակայն ֆինանսական միջոցների սղության և զանազան այլ պատճառներով դա այնքան քիչ ու դանդաղ է արվում, որ կարելի ասել՝ դրանք գրեթե չկան: Ահա այս իմաստով, թերթերի հավաքածուների թվայնացումը, որ կատարում են մեր եգիպտահայ բարեկամները, մեծ ու կարևոր գործառույթ է: Նախ դրանով անխուսափելի կորստից փրկվում են տվյալ պարբերականն ու այն իրականության մասին իրական իմացությունը, որի հայելիներն ու տարեգիրներն են եղել այդ պարբերականները, և հետո՝ թվայնացված վիճակում պահպանվող պարբերականների ուսումնասիրությունն ավելի գրավիչ ու նախընտրելի է: Հավանականությունը մեծ է, որ դրանք ավելի հաճախ են ուսումնասիրողների ուշադրության թիրախ դառնում: Բսկ երբ խոսքը «Արև» և «Յուսաբեր» պարբերականների մասին է, ապա ինքնին այդ գործառույթի մեծագույն արժեքն անգնահատելի է:

Հեղինակը գործվանքով ու անթաքույց հպարտությամբ է ներկայացնում նաև հիմնադրամի հովանավորությամբ ուսանած, գիտական թեզեր պաշտպանած ուսանողներին ու նրանց աշխատությունները, թվարկում ստեղծագործող երաժիշտներին ու նրանց ստեղծագործությունների տպագրության գործին բերած հիմնադրամի մեծ նպաստը: Կրկին ոչ մի դրվատանքի խոսք, ոչ մի բնութագրող բառ ու գովասանք: Կարծես հեղինակը յուրակերպ մարտահրավեր է նետում. նախ օրինակ վերցրեք և, եթե կարող եք, ըստ արժանվույն գնահատեք:

Հայ մամուլի 220-ամյա պատմության ընթացքում հրատարակվել են մեծ թվով բազմաբնույթ պարբերականներ: Հայալեզուների կողքին իրենց ուրույն տեղն ու դերը մշտապես ունեցել են նաև օտարալեզու հրատարակությունները: Պատմական ճակատագրի բերումով օտար ավերում ծնված նոր սերնդին հայ պահելու ու հայեցի դաստիարակելու և, ամենակարևորը,

հայապահպանության սրբազան գործին ծառայելու համար առավելապես վերջին շրջանում դրանք էլեկտրոնային տեղեկատվական հեղեղի պայմաններում անգամ դեռևս անփոխարինելի դեր ունեն:

Մեզանում, ցավոք, դեռևս սփյուռքահայ մամուլն ու նրա պատմությունը լավ ուսումնասիրված չեն, իսկ օտարալեզու հայ պարբերականների հետազոտված լինելու աստիճանը շատ հեռու է բավարար լինելուց: Եվ դա այն դեպքում, երբ չհաշված հայատառ թուրքերեն մամուլը, մինչ օրս լույս տեսած օտարալեզու հայ պարբերականների ու թերթերի քանակը մոտենում է 300-ի սահմանագծին: Գաղտնիք չէ, որ մինչև վերջին տարիների ցավալի դեպքերը, արաբալեզու երկրներում՝ առավելաբար Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում և այլն, ապրում էին մեծ թվով սփյուռքահայեր: Նրանք ստեղծել էին իրենց տարաբնույթ կառույցները, որոնց զգալի մասը հրատարակում էին պարբերականներ, այդ թվում՝ արաբերեն: Դրանցից առաջինը Լիբանանում ՌԱԿ-ի «Զարթոնք» օրաթերթի շաբաթական հավելվածն էր, այնուհետև «Ալ Նիտրա»-ն և այլն, որոնց պատվավոր շարքը 1998 թ. հունվարին լրացնելու եկավ եգիպտահայ մամուլի երեցներից «Արեւ»-ի արաբերեն հավելվածը:

Հավելվածը կոչված էր կամրջելու հայ-եգիպտական բարեկամությունը, իրենց լեզվով Եգիպտոսի ժողովրդին ծանոթացնելու հայերի հերոսական անցյալին ու ներկա օրերում մտահոգող հիմնախնդիրներին: Եգիպտահայ մամուլի տարեգրության մեջ եզակի համարվող այս հավելվածի առաքելությունը ազգօգուտ գործ կատարելն էր, երկու ժողովուրդների միջև սիրո և եղբայրության կամուրջներ ձգելը, նրանց առավել մերձեցնելը, հայ ժողովրդի էության բոլոր ծայրերին ծանոթանալու եգիպտացիների համար կարելիություն ընծայելը: Իրապես լավ է ասված՝ հավելվածը «Արեւն կը փոխադրէ այն լոյսը, որ կը յայտնաբերէ բարեկամ հայ ժողովուրդին պատմութեան իրողութիւնները, տագնապները եւ ցաւերը, ինչպէս նաեւ ապագայի վերաբերեալ իր յոյսերը եւ ակնկալութիւնները»²²: Այն կոչված էր «Արաբ և Հայ ժողովուրդներու միջեւ բարեկամական կապեր ստեղծել և զանոնք ամրացնել, տուեալ ժողովուրդներուն ծանոթացնելով հայ ժողովուրդին ազգային ժառանգութիւնը, արուեստը, մշակոյթը, պատմութիւնը և մեր ժողովուրդին առանձնահատկութիւնները և դիմորոշ գիծերը»²³:

Մինչև 2009 թ. մայիսը հավելվածի պատասխանատու, հայ ժողովրդի և հատկապես եգիպտահայերի պատմության մասնագետ, պատմաբանին բնորոշ ավելի շատ նյութերի բովանդակությամբ, քան դրանց ձևերով հետաքրքրվող Մոհամեդ Ռիֆայթ էլ Իմամը, ողջ խմբագրակազմը և գրախոսվող գրքի հեղինակ, ազգային-հասարակական-մշակութային ասպարեզում ավելի քան հիսնամյա գործունեություն ծավալած եգիպտահայ նշանավոր մտավորական Պ. Թերգյանն այդ պատվաբեր առաքելությունը հիանալի կա-տարեցին, մշտապես վայելելով եգիպտական իշխանությունների և

²² Թերգյան Պ., «Արեւ»ի արաբերեն ամսօրեայ յաւելուածը, Գահիրէ, 2014:

²³ Նույն տեղում, էջ 27:

մտավորականության բարեհաճությունը: Նրանց հիմնական առաքելություններից էր կարելիություն ստեղծել եզրիպատացիներին լավ «ճանչնալու հայ ժողովուրդին էությունը իր տարբեր երեսակներով»²⁴:

Թերզյանը սփյուռքահայ այն գործիչներից է, որոնք երբեք կուսակցական չդարձան, և առանց այդ համակարգում «աթոռ, դիրք կամ իշխանություն ունենալու որևէ ակնկալութեան», ներքին համոզմունքով և նվիրումով, բարձր գնահատելով հայությանը զանազան արկածախնդրություններից հեռու պահելու «Արեւ»-ի զգոն և շրջահայաց մոտեցումները՝ ծառայեցին ազգին ու նրա ցավերը դարմանելու դժվարին գործին: Նա, կուսակցական «չըլլալով հանդերձ, «Արեւ»-ական մը եղած է, եթէ կարելի է նման եզր մը գործածել, մաս կազմելով անկուսակցական այն զանգուածին, որ տասնամեակներ շարունակ հաւատարմօրէն հետեւած է «Արեւ»-ի որդեգրած առողջ ազգային ուղեգծին»²⁵: Հատկապէս վերջին տարիներին, ինչպէս իրավացիորեն տարակուսում է նաև Պ. Թերզյանը, շատ անգամ չի էլ հասկացվում, թե ով ինչի համար է կուսակցական դառնում: Անցյալի հավատալիք, գիտակից, խելացի ու անշահախնդիր նվիրյալների կուսակցական տիպարն աստիճանաբար հազվագյուտ երևոյթ է դառնում, խարխլվում են նախկին սկզբունքները, դրամական հարաբերություններն ու շահը սկսել են խուժել այդ ասպետական վեհանձնությանը ու մաքրությանը օժտված դաշտը, իրենց դիրքերում կանգուն են մնում շատ քչերը: Իսկ նրանց կողքին ու նրանց որպէս թիկունք, գորավիզ ու սատար անչափ անհրաժեշտ են ու օգտակար թերզյանները, այսինքն՝ հավատալիք համակիրները: Այսօր, երբ հիրավի մարդիկ փնտրում են ազգային հոգսերին սրտացավ ու անշահախնդիր հայորդիներ, այնքան էլ կարևոր չէ, թե նրանք ինչ գաղափարական երանգավորում ունեն: Կարևորն ազգային առողջ մտածողության տեղ անհատների միահյուսումից ձևավորվող շարքերն են, որոնք պիտի ծառս լինեն դարատարիք ունեցող անարդարությունների դեմ և ուղի հարթեն դեպի լուսավոր գալիք:

1998 թ. հունվարից 2009 թ. ապրիլ գոյատևած հավելվածի անցած 11-ամյա ուղու, դրա ընթացքում լույս տեսած 137 համարներում պարունակող 16 եզրիպատահայ և օտար հեղինակների հրապարակումների պատմությանն ու բովանդակության վերլուծությանն է նվիրված Պ. Թերզյանի սույն աշխատությունը: Տեղեկագրական բնույթ ունեցող այս ուսումնասիրությունը բաղկացած է պրոֆ. Ա. Խառատյանի հեղինակած Առաջաբանից, երեք գլուխներից, շահեկան Հավելվածից և մի քանի զանազան գրություններից, որոնք «կրնան սատարել ներկայցուող հարցերուն առաւել ճիշդ եւ հստակ ընկալումին»:

²⁴ Նույն տեղում, էջ 41:

²⁵ Նույն տեղում, էջ 127:

«Օագուս» վերնագրված առաջին գլխում հեղինակն իրեն հատուկ մանրակրկիտ ու բարեխիղճ մոտեցմամբ ներկայացնում է այն իրադարձությունների պատմությունը, որոնց շնորհիվ հայ մամուլի խորապատկերի վրա երևաց վերոհիշյալ Հավելվածը: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ Եգիպտահայության անցած ուղին ու նրա դրական փորձը՝ որպես երկու ժողովուրդների լիակատար համագործակցության վառ օրինակ, որպես ներդաշնակության, մեծամասնության թույլատու, ճգնելու ցանկության իսպառ բացա-կայության և փոքրամասնության հպարտ կեցվածքի լավագույն դրսևորում, արժանի են ակադեմիական ուսումնասիրության: Եգիպտահայ գաղթօջախում երկար տասնամյակներ լույս տեսած թերթերի կողքին արաբերեն խնդրո առարկա Հավելվածի երևումի պատմության ներկայացումը՝ որպես մերօրյա լավագույն իրողություններից, ավելի քան անհրաժեշտ էր, որն էլ նյութի խոր իմացությամբ և սրտացավ կատարել է այդ գործառնությունների բոլորովին էլ ոչ շարքային մասնակից հեղինակը:

Քանի որ Եգիպտոսում թերթ հրատարակելու արտոնագիր ստանալը բավական բարդ գործընթաց է, դրա համար և, գիտակցելով նոր արաբալեզու թերթ լույս ընծայելու անհրաժեշտությունն ու վայելելով իշխանությունների բարեհաճությունը, «Արեւ»-ի հրատարակիչ մարմնի նախաձեռնությամբ նոր պարբերականը սկսում է լույս տեսնել որպես Հավելված: Արձանագրելով կատարվածը՝ հեղինակն անթաքույց ուրախանում է, մանկան անադարտությամբ հրճվում, լավ բան անելու գիտակցությամբ՝ բավարարվածության զգացում ապրում:

Երկրորդ՝ «Ճառագայթում» գլխում հեղինակը ձգտում է առավելագույն տեղեկություններ ու լուսաբանություններ տալ Եգիպտահայ մամուլի պատմության մեջ եզակի համարվող այս պարբերականի մասին, ներկայացնում դրա բովանդակությունը, քննարկված խնդիրներն ու դրանց տրված լուսաբանությունները, ինչպես նաև դիմակայված դժվարությունները:

Հեղինակը նշում է, որ 16 էջով հրատարակվող Հավելվածի առաջին համարը բացվում է պատասխանատու խմբագրի «Երկունքի Յաւերը...եւ Օնունդը» խորագիրը կրող խմբագրա-կանով, որտեղ փոքրիկ պատմական էքսկուրս կատարելուց հետո ներկայացվում են պարբերականի գոյառման դրդապատճառներն ու նախանշվող ուղին: Իսկ Պ. Թերգյանի առաջին՝ «Եւ ժպտեցաւ Լուքսորը» խորագրով հոդվածը տեղ է գտնում երկրորդ համարում: Դրանով էլ սկսվում է երկու հավասարակշռված, կիրթ ու ձեռնարկած գործին անշահախնդիր նվիրյալների թերթային 11-ամյա շահեկան բարեկամությունը: Հետագայում հասարակության կողմից թերթի լավ ընդունելությունն ու նրա նկատմամբ օրեցօր աճող հետաքրքրությունը թելադրում են, որ պարբերաբար ներկայացվեն մամուլի տարբեր հրապարակումներում եղած հայկական խնդիրների վերաբերյալ հայության ու օտարների տեսակետներն ու անդրադարձները:

Մեկ տասնամյակից ավելի գոյավորման ընթացքում Հավելվածին հաջողվում է իր կայացման գործում ընդգրկել տարբեր սերնդի պատկանող ու

տարբեր մասնագիտությունների տեր արաբ, եգիպտացի և հայ մեծաքանակ մտավորականների, որոնց շնորհիվ «իրագործուած է յաւելուածին բազմաբնոյթ բովանդակութիւնը»:

Հավելվածում քննարկվող առանցքային հարցերից մեկը ցեղասպանության խնդիրն էր: Պատահական չէ, որ ավելի քան 100 հրապարակումների մեջ արծարծվել են Հայոց եղեռնին առնչվող խնդիրներ՝ արտահայտելով հիմնական մեկ տեսակետ. անհրաժեշտ է մշտապես հետամուտ լինել հայերի պահանջատիրության իրավունքին և աներկբայորեն դատապարտել օսմանյան իշխանություններին: Պակաս կարևոր չի համարվել այդ տեսակետներն արաբ ընթերցողին փոխանցելու գործը: Հեղինակը ցավով արձանագրում է, որ այդ աշխատանքներն իրագործելը չափազանց բարդ խնդիր է, որը և եգիպտահայության մեջ վերջին տասնամյակների ընթացքում «հետզհետե՛ համատարած դարձող մտաւորական երաշտին եւ գաղափարական հիւժախտին. արդյունք է»²⁶:

Գրքի ամենացավառատը «Շիջում» գլուխն է, որտեղ ներկայացված են Հավելվածի դադարեցման համար ստեղծված աննպաստ իրավիճակն ու արհեստածին պատճառները: Մանրամասների մեջ չխորանալով՝ արձանագրենք, որ այդ տեսակ դրսևորումների շատ օրինակներ ունենք հայ և հատկապես սփյուռքահայ մամուլի պատմության անդաստանում: Դրանց հետևանքով փակվել են տասնամյակներ շարունակ լույս տեսնող հրաշալի պարբերականներ, հալածվել հրաշալի և ազգին ու իրենց գործի նվիրյալ մտավորականներ: Հավելվածը դադարեցնելու մասին հեղինակի այս շարադրանքը հոգուտ իր պաշտպանյալի հրաշալի, պատճառաբանված, փաստերով հարուստ, խելացի ու գրագետ իրավագետի փաստաբանական ելույթ է հիշեցնում: Միայն, ցավոք, արդարացման դատավճիռ չի հնչել, և Հավելվածի հրատարակությունը չի վերսկսվել: Իսկ այդպիսի՝ անարդարացի ելքով դեպքեր պատմության մեջ, որքան ուզեք, եղել են:

Ինչնէ, Հավելվածը, որը հրաշալի պահպանելով ամսօրյային հատուկ լրագրողական բոլոր նորմերը, գործում էր սփյուռքահայ մամուլին հատուկ լայնախոհությամբ, դրսևորելով հարգանք հյուրընկալ երկրի ու նրա ժողովրդի նկատմամբ, օրինապաշտ և նվիրյալ քաղաքացու կեցվածք, հանդուրժողականություն և այլախոհություն, դադարեց լույս տեսնելուց: Կորուստն անկասկած մեծ էր մի շարք առումներով.

ա. Արաբալեզու հայեցի պարբերականները շատ քիչ են եղել, իսկ այդքան դժվարությամբ ստեղծածն այդպես անդառնալիորեն կորցնելը խելամիտ քայլ համարել հնարավոր չէ:

բ. Հավելվածի միջոցով հնարավոր էր դառնում հայ-արաբական հիմնախնդիրների փոխադարձ շփման եզրեր հայտնաբերել, դրանցում առկա աղերսներն ընդգծելով ցույց տալ հայերի իրավացի լինելն ու դաշնակից

²⁶ Նույն տեղում, էջ 128:

ունենալ արաբական աշխարհում, որն անչափ կարևոր է կրոնական հակամարտություններում գալարվող ներկա աշխարհում:

գ. Հավելվածի տարածման կանխամտածված աշխարհագրությունը հնարավորություն էր ընձեռում մերձավորարևելյան այլ արաբալեզու երկրներում ևս դաշնակիցներ գտնելու, դեսպանատների միջոցով անհրաժեշտության դեպքում աջակցություն ապահովելու:

դ. Հայ մամուլի պատմության կտավի վրա դադարեց առկայծել գեղեցիկ ու համեստ մի աստղիկ, իսկ դրանց կարիքը մեզ նետած մարտահրավերներին դիմակայելու դժվարին գործում մեր օրերում շատ է զգացվում:

ե. Անտեսվել է Սփյուռքում հայ մամուլի տեղի, գործառույթների ու նշանակության հանգամանքը, որն անդառնալի վնասում է ընդհանուր գործին և, որ ամենավտանգավորն է, կարող է վարակիչ դառնալ:

Անփոփելով նշենք, որ սույն ուսումնասիրությունը բազմաէջ ու հաստատիոր չէ, սակայն լուրջ խնդիրներ է բարձրացնում: Առաջին հայացքից անաչառ փաստագրողի դիրքերից Պ. Թերգյանը արձանագրում է կատարված իրողության պատմություն: Սակայն զգացվում է, որ նա կորստյան ցավ ու մորմոք ունի հոգում թաքցրած, տազնապ ու անհանգստություն նման դրսևորումների նկատմամբ: Դրսևորումներ, որոնք, աղքատացնելով մշակութային, հոգևոր ու կրթական ասպարեզները, վտանգում են հայապահպանության կարևորագույն գործառույթները և, վերջապես, Սփյուռքի գոյությունն ընդհանրապես:

Ցանկանում եմ մեկ անգամ ևս ընդգծել, որ Սփյուռքում այսօր հաց վաստակելն ավելի հեշտ է, քան հետեղեռնյան դաժան տարիներին: Սակայն այսօր էլ հայ մնալն ու հայ մեծացնել-կրթելն է դարձել չափազանց դժվար: Իսկ այդ դժվարին, նվիրական ու ազգահաճո գործում խիստ անհրաժեշտ են Պերճ Թերգյաններն ու նրանց արգասաբեր գրիչները: Շնորհակալություն նրանց բոլորին բացարձակ նվիրումի ու հայ տեսակին լիարժեք հավատարիմ լինելու, Արևիս տակ Մարդ մնալու համար:

ПЕРЧ ТЕРЗЯН

ՏԱՐԿԻՏՅԱՆ Տ. Դ.

Резюме

Творчество египетского армянского деятеля Перча Терзяна является собой образец служения высоким национальным идеалам и своему народу. Сам П. Терзян не считал себя писателем либо историком. Его статьи в основном посвящены Армянскому вопросу. Книги П. Терзяна основаны на документальном материале и освещают те или иные проблемы и знаменательные события в жизни египетской общины.

BERGE TERZIAN

S. SARGSYAN

Abstract

The work of Egyptian-Armenian Berge Terzyan definitely deserves appreciation and tribute and has to enjoy the respect of every Armenian.

He is a strong and creative person, who worries about the future of the Armenian Diaspora, though he does not consider himself a writer or a researcher. Terzyan's books are based on documentary information and highlight diverse issues and events in the life of Egyptian-Armenian community.